

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրբ. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզէք «Հայեղի»-ին մէջ աղոյր երեւնալ,

Պատրիս սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ



Վեհ. Հայրապետը մեծ բանակութեամբ
եկեղեցական գիրքեր ղրկեր է Պատրիարքա-
րան, զանոնք բաշխել տալու համար շատ մը
գաւառներու եկեղեցիներուն, որոնք զուրկ
մնացած են այդ տեսակ գիրքերէ:

— Բարիզաբնակ Էգնայեան եղբարք յանձն
առեր են իրենց ծախքով 6 որբեր խնամել և
անոնց արհեստ սովորեցնել տալ Բարիզի մէջ:

— Ազգ. Հիւանդանոցի մէջ պատսպարուած
Հափահաս որբերը շրջանաւարտ նկատելով,
զանոնք Կ. Պոլսոյ ծանօթ արհեստաւորներու
քով աշկերտութեան պիտի դրուին:

— Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիս.
Այսնեան ստուգեր է որ Վանայ Սպակերտ
գաւառի կարօտելոց անուամբ Անգ. նպաստա-
մատոյց մարմինէն եկած 300 ոսկիի արժուիքը
150 ոսկիի ծախելով այդ դրամը գրպաներ
են, այս պատճառով իրեն դիմող Սպակերտցի-
ներուն դրամ չէ տուեր. անոնք ալ կաթո-
լիկներուն երթալով երկերկու մէծիտիէի ինք-
զինքնին անոնց ծախեր ու արձանագրութիւն-
նին փոխել տուեր են: Երեսնին ճերմակ կենայ:

— Անցեալ կիրակի օրը Թաղապետութեան
պաշտօնատան մէջ տեղւոյս ազգային վարժա-
րանաց Հոգաբարձու ընտրուեցան, Տեարք
Յովակիմ Թովմասեան, Գրիգոր Կիւլպէսէր-
եան, Կարապետ Սալթանեան, Սարգիս Մու-
րատեան, Գալուստ Աւագեան:

— Սօֆիայի գեղարուեստի վարժարանէն
այս տարի շրջանաւարտ ելած է Տ. Միհրան
Կարապետեան անուն փ. Պօլսեցի երիտասարդ
ազգայինը:

ՈՂՈՂՈՒՄ

Զորեքշաբթի օրը, առաւօտեան ժամը
8էն մինչև 11 տեղացած հեղեղանման անձ-
րեւ մը Վանան և անոր շրջակաները բաւա-
կան ողողեց: 130ի չափ արգէն խորխուլ
չէնքեր կիսովին կամ ամբողջովին փլան. թէև
մարդու կորուստ չկայ, բայց խել մը տան
կարասիք ու բաւական արջառներ ջուրը բշած
տարած է. շատ մը տուներու ներկնայարկե-
րը ջուրով լեցուած են: Թաղապետութեան
կողմէ աղքատ արկածեալներուն նպաստներ
բաշխուեցան: Նոյն իրիկունն ալ թէև Բ. տե-
ղատարափի մը նշանները երեւցան, բայց

բարեբաղդաբար քիչ տեւց և հիւսիսային սոստիկ հովմբ անձրեւաբեր ամպերը ցրուեց: Կըսուի թէ անձրեւը Շուվայի և մանաւանդ Բրավատի կողմերուն ալ բաւական քանակ հասուցած է: Տէֆէի ջրաղացները մեծ մասամբ բշեր տարեր է. կըսեն նաև թէ այն կողմերը մարդու ալ կորուստ կայ: Հեռագրական և թէլեֆոնի հտղորդակցութիւնք ինչպես նաև շոգեկառքի երթեւեկը մինչև այսօր դադարած են:

Վերջին պահուն իմացանք թէ հեղեղը՝ Վանայի Գ. թաղը բնակող խառփուղի գաղթական աղքատ ընտանիքի մը երկու տարեկան մանկին ալ կարասիներուն հետ բշեր տարեր է:

Քաղաքին մէջ գտնուած հին ու խորխուր տունները թաղապետութեան ծախքով վար առնուելու վրայ են:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՐԵՐ



Ալէաթճեան Տ. Գրիգորիս Սրբազանին վիճակը գոհացուցիչ է: Հինգշաբթի օրը իր մտաւորական յստակութիւնը վերստացած է. ախորժակը բացուած է և կըցեր է քիչ մը ուտել:

— Երուսաղէմի Ս. Պատրիարքին կողմէ իմաց տրուած է Պոլսոյ Ազգ. Վարչութեան թէ Լուսարարապետ Տ. Սահակ Եպիս. Խաչայեան՝ իր պաշտօնին վերաբերեալ յանձնարարական գիրերը ղըրկուելուն պէս պատրաստ է իսկոյն ճամբելու, Ատանա երթալու եւ ընտրական գործողութեանց ձեռնարկելու համար:

Կաթողիկոսական ընտրութիւնը պիտի ըլլայ համաձայն 1872ի հրահանգին, որով ընտրուեցաւ Մարաշցի Մկրտիչ Կաթողիկոսը:

— Անցեալ հինգշաբթի գիշեր Մաքրիգիւղի եկեղեցին գողեր մտնելով 50-60 ոսկիի արծողութեամբ արծաթեղէն տարեր են:

Գողերը տակաւին գտնուած չեն:

— Թէոդոսիայէն կը գրեն թէ տեղացի հայերը՝ քաղքին հայ եկեղեցիներուն երէցփոխի (հոգաբարձու) ընտրութեան համար ժողով կազմելով, միաձայնութեամբ վերընտրեր են նախորդ երէցփոխ Կոստանդին Արութեանը որ երեք տարի շարունակ աշխատած է եկեղեցիներու օգտին, կառուցանելով տարեկան 1200 ռուպլի հասոյթ բերող տուն մը՝ 12,000 ռուպլի արծողութեամբ:

— Գահիրէի մէջ օժանդակ մարմին մը կողմուեր է Վանեցի բարեսէր աղքայիներէն, Վանայ որբանոցներուն նիւթապէս նպաստելու նպատակով:

— Թօքաթի մէջ պատահած հրդեհէն Հայերու տուններ և խանութներ ալ այրած են, որոնց մասին տեղեկագիր մը հասած է Պատրիարքարան՝ տեղւոյն առաջնորդարանին կողմէ:

— Քահանայ մը... թատերական հեղինակ աչա վերջին նորութիւնը որ կուգայ մեզի կովկասէն: «Տեղական քահանաներից մէկը, — կը գրեն Բագուէ — Հ. Եղիշէ Գեղամեան որ մեր գրականութեան մէջ յայտնի է իր մի քանի զըրուածքներով, նորերս աւարտել է մի թատերախաղ, որը պիտի առաջարկուի Բագուի տրամադիքական խմբին, առաջիկայ սեզօնում խաղալու»:

ԻԶՄԻՐԻ ՀՐԴԵՀԸ

Անցեալ չորեքշաբթի աղետալի հրդեհ մը մօտիկ դարձուցեր է Իզմիրի քարափին շէնքերը: Օթէլ տը Վիենէն մինչև Հաճի Տափուս քարքուհի ընկերութեան գրասենեակը: Կրակը սկսեր է հրդիւ շինողի մը տաղաւարէն: Այրած շէնքերու թիւն է 18: Նաւահանգստին մէջ խարսխած առագաստանաւերն ալ պահ մը վտանգի մէջ են եղեր բայց նաւաղը հարկ եղած զգուշութիւնները ըրած են:

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

Տիար Յ. Կ. Պօնճուքեանի պատկերազարդ քերական — Ընթերցարանը, որ մինչև ոգոս՝ 20 լոյս պիտի տեսնէ: Գին 60 սանդիմ:

Ռուսճուբի Ազգ. վարժարանի Ա. Դասարանի չորս աշակերտաց կողմէ հետեւեալը մեզի ալ ղրկուած է հրատարակելու խնդրանքով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայիւս կը փութանք յայտնել հասարակութեան թէ՛ Վառնայի մէջ հրատարակուող «Հայելի» անունով թերթին մէջ, տեղոյս Ազգ. վարժ. տարեկան հարցաքննութեանց մասին տրուած տեղեկութիւնները ամբողջութեամբ ստուգութիւններ էին: (*)

Նաև կը խնդրեմք պատուարժան ուսուցիչներէն որպէսզի հանդիպած տեղերնին անվայել խօսքերով զմեզ չի նախատեն, թող գիտնան որ Ռուսճուբի Ազգ. վարժ. քաւէ երկու տարի առաջ Պուլկարահայ վարժարաններու մէջ առաջին տեղը բռնած էր շնորհիւ ժրջան ուսուցիչներու և արդի «Ծոյց և յայտը» աշակերտներու՝ (ինչպէս կը յորջորջեն մեր պարոնները): Այս տեղ պարտք կը համարինք նաև յիշեցնել իրենց թէ՛ Ռուսճուբիներ իրենց պարտականութեանց մէջ երբեք թերացած չեն ու իրենց տղայոց դաստիարակութեան մասին երբեք անհոգ չեն գտնուած, ինչպէս իրենք կը կարծեն:

Ուստի խորհուրդ կ'ուտանք մեր Պ. ուս-

(*) Ար յիշեն ընթերցողք թէ, ասկէ 2 ամիս առաջ, թիւ 115 «Հայելի»-ի մէջ նախապատրաստեալ ցուցակ մը հրատարակած ըլլալնուս համար Ռուսճուբի ուսուց. կաճառը (?) թուուցիկ թուղթով մը ասդին անդին կը թուչտէր թէ մեզի դէմ դատ քացած է (??): Մենք այն ատենէն գիտէինք որ այդ պարոնները՝ նոյն ցանկին պատճառաւ տեղացեաց արդար ղիտողութիւններէն ազատելու մտօք ատանկ անգոյ դատի մը անունը հրապարակ նետած են, եւ այս բանն ալ ներելի էր տակաւին ուսման շրջանը չաւարտած մէկ երկու ուսանող-վարժապետիկներու ու անոնց համախոհ ընկերաց համար:

Ծ. Խ.

սուցիչներուն որ ալ վերջ դնեն այս անհամ կատակներուն, եւ փոխանակ երեւակայական դատերով ու նախատական խօսքերով ինքզինքնին արդարացնել ջանալու, քիչ մ'ալ իրենց աշակերտներու և անոնց հայրերու արժանիքը ու պատիւը գնահատել թող սովորին:

Ստորագրութիւն

1899 Յուլիս 12

Աշակերտք

Ռուսճուբ

ՀՐԱՅՔ Է

Ազգային ու է պաշտօնէութեան մը ինքնաբերաբար ելնել ժողովուրդին շէնք շէնք հաշիւ մը տալը հրաշք է:

Ուղղութիւն և ճշմարտութիւն բարոյողներուն գործերուն մէջ ուղղութիւն եւ ճշմարտութիւն գտնելը՝ հրաշք է:

Արտասահմանի մէջ ամենագէտ չեղող ուսուցիչ մը գտնելը՝ հրաշք է:

Աշխարհիս մէջ կնոյ մը սէրէն չի յաղթահարուած մէկը գտնելը՝ հրաշք է:

Երկու անգամ երկուքը չորս կընեն չի գիտցող փոքրիկներին տասն ամսուան մէջ լրագիրներու յօդուածներ խմբագրելու աստիճան զարգացած ըլլալը՝ բաւական հրաշք է:

Իրարու հետ միշտ սիրով վարուող հարս ու կնուր մը գտնելը հրաշք է:

Բաւարասանքէ չախորժող կին մը տեսնելը հրաշք է:

Հայ ազգը դէպի լաւը առաջնորդելու պաշտօնն ստանձնող վարչութեանց մէջ առաջին օրէն մինչեւ վերջը ամբասիր գործունէութիւն ունեցող մէկը գտնելը՝ հրաշքներուն հրաշքն է:

Կ.

Մ. 2.

ԹՈՒԹՈՎՍՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատրիկը կը փաճառի ի գին 25 սանդղիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վանա:

Ծ Ի Ծ Ա Ղ

«ՀԱՅՐԻԿԻՍ ԿԸ ՀՄԿԵՄ»

Ժիւլ և Էմիլ անունով փարիզցի երկու ստահակներ անցեալ շաբաթ գիշերուան ժամը Ձին կը շրջագայէին փարիզի ծառուղիներէն մէկուն մէջ, երբ տեսան մարդ մը որ ծառուղիի նստարաններէն մէկուն վրայ երկնցած կը խոկար: Առաջին անգամ այս անձը թերեւ գինով մը կարծուէր, բայց ընդհակառակը Լուի անունով պատուաւոր վաճառական մըն էր, որ օրուան տաքութենէն ու յոգնութիւններէն քիչ մը զովանալու համար եկած էր հոն ու անգլալարար Մորփէոսի դիրկը ինկած:

Երկու ստահակները կամացուկ մը անոր մօտենալով, ամենայն ճարպիկութեամբ բըսակը, ժամացոյցը ու թաշկինակը կը գողնան, բայց գիշերապահ ոստիկանները հետեւած էին անոնց շարժումներուն: Ժիւլ նշմարեց լըրտեսուելին ու մօտակայ ճեմիշներէն մէկուն մէջ պահուցողացաւ, իր հետ տանելով նաև գողոնները, իսկ Էմիլ կեցած էր հոն բողոքովին անտարբեր ու կը դիտէր ոստիկաններուն մօտենալը:

— Ի՞նչ կընես հոտ, պարոն, հարցուցին ոստիկանները:

— «Հայրիկիւ կը հսկեմ», պատասխանեց Էմիլ, քնացողը ցուցնելով:

Անմիջապէս արթնցուցին վաճառականը, որ ոչ միայն ատոր իր որդին չըլլալը յայտնեց, այլ այդ մտածման դէմ իսկ բողոք ու ժողով բողոքեց: Ոստիկանք Էմիլը ձերբակալելէ ետքը ճեմիշ մասն ու «Գոն» ալ հոս հայրիկիւ կը հսկես կոր, ըսելով Ժիւլն ալ բռնեցին ու առաջնորդեցին ի բանտ, իսկ վաճառականը այս երկու ինքնակոչ բարի-ծաղիկ գաւկներուն ձեռքէն այդչափ աժան ազատած ըլլալուն վրայ ուրախացած, գնաց տուն, իր խանգարեալ բունը շարունակելու:

Մարէն

Գաւառական ժողովրդային առած

«Խոնաւ Օգոստոսին՝ դաժան կըլլայ ձմեռը, որ Օգոստոսին՝ ձիւնատ կըլլայ ձմեռը»:

2

ՃԻՅԻՋ ԿԵՕՐԻՒՄԻՒ

Կէչէն հաֆթա, Պուլկարիանըն պիր շէհրինտէ, միլլ' թտաշլարմըղտան պիր գատըն՝ քէնտի են սօն գըղընը Էվլէնտի-րէճիկիինտէն, ատէթի գատիմէտէն օլտուղու իւղը, տիւլինէ իւչ տէօթի կիւն գալարագ, օգուլուճու հօրքուր ապլա մագամընտա պուլունան տնտեսուհի վասըթաւըյա գօնու գօնշույու ճիհիզ կէօրիւմինէ տալէթ խտէր: Իշպու գօնու գօնշուտան պաշպա, հէր էվէ կիրէն չըգան Արանսար թէթէ, Սողոմէ ապլա, Կիւլիւլ գատըն, վէ թաքուչ քէրէկին նամընտա պիր թագըմ գատընլար տա տալէթ օլունուր քի, պունլար՝ սէյր իտէճէքլէրի ճիհիզին մէտհիյէսինի էօթէյէ պէրիյէ կիտիպ իլան իթսինլէր: Ենվմի մէղքիւրտէ տալէթիլլէր՝ թիւլ իլէ էօթիլլիւ ճիհիզ սանտըղընըն պուլունտուղու օտաւտա Արանսար թէթէնին թիյասէթի թահթընտա թօփլանըլար:

Պիր ալ հօշ պէշտէն վէ էօթէքի-նին պէրիքիին գարը գօճա, գայնանա գայնալթա վէ կէլին կէօրիւմճէ գալկալարընը պիրիպիրինէ նաղ իլլէտիքտէն վէ թաթլը իլէ գահվէ իգրամլարը իճրա օլունտուգտան սօնրա՝ Արանսար թէթէ մէճլիսի քիւշատ իտէր:

— Է՛ հատէ ճանըմ, արթըճաճըգ գօնուշմալարմըղը պրագալըմ տա՝ գըղըմըղըն (կէլինին) եիւլինիւ վէ էլ հիւնէրլէրինի կէօրէլիւմ:

Պու առա գըղըն վալիտէսի տըշալը չըգուպ վէ գըղընա պիր ալ մալիւմաթ վէրտիքտէն սօնրա, քէնտիսի էօնտէն՝ գըղը արգասընտան վէ օնլարտան սօնրա խանէտէ պուլունանլար վէ կէլինին ագրանլարը օտայա տէօքիլիւրլէր: Էլ էօրմէք այինի իճրա օլունուպ, կէլին հանըմ գաբըյա եագըն օթուրուր:

Արանսար թէթէնին էմրիյլէ սանտըգ աչըլըր:

— Մաշալլահ, մաշալլահ —

— Քա նէ՞ կիւզէլ գոգուլար չըգըջօր.

— Հէմէն Ասվազին սօնունա գատար էօյլէ կիւզէլ գոգուլար չըգարթսն :

(Սանտըգտան 4—5 գաթ ֆիթան խուրուճ իտէր) .

— Քա պու նէ՞ չօգ ճէհէզ . պէշթանէ ֆիստան . իբիսի իբէքլի , իւշիւ գու մաշտան . արթըճաճըզ պէշ սէնէ ֆիստան իսթէմէյէճէք տիր :

— Աման սէնտէ Սօղոմէ ապլա , օնլար պիզիմ վագթըմըզն ֆիստանլարը տէյիլ քի 4—5 սէնէ կիթսին :

— Եարըն պիր կիւն մօտասը կէշէր , հայտէ էօյլէճէ դալըրլար :

— Ա՛ նիշի՛ն գալսըն . պօզսուն պօզսուն ուշագլարընա եաբըն :

(Սանտըզըն իբինճի գաթընտան խուրուճ իտէր 2 չիֆթ անէվաթօ եաստըզ 4 չիֆթ բանթօֆ . պիր չիֆթ թանթէլա եաստըզ . պիր գարեօլա էօրթլուսիւ , պէյազ թագըմլար վէ պիր գութու բառֆիւմ թագըմը) :

— Մօրու պու նէ՞ գատար ճէհէզ :

— Նէ՞ օլաճագ ճանըմ , սօն գըզը օլտուղունտան էօթլուրիւ էօզէնիշ էօզէնիշ եաբմըշ :

— Քա պուշլարը հէփսինի տէ քէնտի՛ մի տիբմիշ :

— Էյ պագսանա՛ քա , գըզճըզազ նէ՞ գատար պօղուլմուշ . հէլպէթտէ քէնտի էլինտէն կէշմիշ տիր . . . սանաըզա եէրլէշտիրմէք իշիւն :

— Մօրու օ կիւզէլ գութունուն իշէրիսինտէ նէ՞ վար եա՛ :

— Պիմէյօրմըսըն . (գուլաղընտան , եավաշճա) պէյազըզ , գըրմըզըզ , ազչըւըզ , բէնպէլիք վէ գօգու .

— Նէ՞ գօգուսու .

— Պիմէմ , սօնրա չըգարսա աննարըզ :

— Ալլահ թամամընա եէթիշտիրսին , խալըրլարընը կէօրէսինիզ . ուլուրլու գատէմիլ օլսուն . Հռիփսիմա թէթէ , սէ-

նին տէ կէօղիւն այտըն օլսուն , ուշագլարընըն թագընը պսակընը էօրմէյէ գըմէթ օլսուն :

Ատէթտէն օլտուղու իւզրէ պու վէ պու կիպի պիր թագըմ տուվալար վէ տառօլար վէրիլտիքտէն վէ պէօյլէ կիւզէլ պիր ճիհիզ պինտէ պիր կէօրմիւշ օլտուգլարընը պէյան իթտիքտէն սօնրա՝ խանէտէն չըգարլար :

Շիմտի պունլարը եօլտա կիտէր իքէն տիննէյէլիմ :

— Գըզ մօրու , պէյէնտի՞ն մի ճիհէզի .

— Ա՛հ , պայաա , չիհէզ մի օ , կնքա մարըն պօհչալըզընտա պիր եիւզ ճիւզ բէշլիր ծօգտը .

— Գայընչօնուն պօհճալըզընա տա տիգաթ իթտինիզ մի .

— Նէ՞ վար ըտը քի , պիզ օ՛ արա թադուշ քէրէկինին կէլինիյլէ չէքիշմիշ օլտուղունու սէօյլէշիյօր - ըտըզ .

— Նէ՞ օլաճագ . պիր չիֆթ չօրապ գօյմուչլար ըտը . պիզիմ Գօգօյուն աշաղընա պիլէ օլմայաճագ :

— Կէօրտիւնիւզ մի , պիր չիֆթ նալընը պիլէ եօգ ըտը :

— Գըզ , չիմտի օ ատէթ գալգմըշ տըր :

— Աման մօրու , պէնճէ , մատէմ քի համամ թագըմը եօգ տըր , օ չիհէզ չիհէզ տէյիլ տիր :

— Պէնճէ տէ էօյլէ տիր , չիհէզ եաբմըշմ տէյէրէք էլ ալէմի պաշըմա թօփլամամ :

Պու էսնատէ պիր ոօգագ աղընտա պուլունուպ . «Գալըն սաղընճագլա՛ տէյէրէք պիրպիրլէրինտէն միւֆարէգաթ իտէրլէր :

Հիշ չիւպհէ եօգ տըր քի , պունլար խանէլէրինէ կիթտիքլէրինտէ գօնու գօն շույու պաշլարընա թօփլայըպ , կէօրտիքլէրի ճիհիզի արթըզ իսթէտիքլէրի կիպի էնինէ պօյունա չէքմիշ տիրլէր :

Էքսէրիպիր թագըմ գատընլարըն ուֆաճըզ պիր վէսիլէ իլէ օրթալըզը վէլվէլէյէ վէրիպ մուֆասալըզա գալգըշմալարը մալիւմ օլուպ , պէօյլէ ճիհիզ սանտըզլարընը օնլարա կէօսթէրիպ պէյհուտէ եէրտէ տիլլէրէ տէսթան օլմագ աճապա քեարը ագըլ մը տըր . :

ՆՈՐ ԳԻՒՏ ՄԸ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Բերայի Պօն Մարշի վաճառատունը ի վաճառ հանած է սրուակ մը որուն միջոցով վայրկենապէս մարդ կրնայ ունենալ ամէն տեսակ կաղէօցներ:

Հասարակ ջուրը՝ այդ սրուակին մէջ չեցունելով, իսկոյն սքանչելի կաղէօզ ջուրի մը կը վերածուի: Միւսին կերպով՝ Հասարակ ճերմակ գինին փրփրուն գինիի, կատարեալ շամբանայի կը վերածուի: Այդ միւսին սրուակով կարելի է ունենալ փրփրուն կաթ՝ հիւանդներու համար, օշարակներ, նարնջաջուր, լէմոնատ, ևլն. ևլն:

Այս սրուակին գործածութեան եղանակը ձրիապէս կը ցուցուի Պօն Մարշի վաճառատան մէջ, Բերա, Մեծ Փողոց, Թիւ 254:

ՇԱՐԺՈՒՄԻ Յ ԹՂԹԱԿԻՑԸ

Չորեքշաբթի օրը հրատարակուած Շարժումի մէջ Սօփիայի Յ. Թղթակիցը Պօլկարահայ վարժարանները «միմիայն անբաններ արտադրող դպրոցներ» կ'անուանէր:

Ը. Ն. այժմ այս խօսքերը Հոգաբարձութեանց, տնօրէններու, ուսուցիչներու եւ ուսանողներու ուշադրութեանը յանձնելով, մենք սա կը հարցնենք այդ Յ ին թէ, ինքը ո՞ր դպրոցէն արտադրուած է:

Բոժ. — Անպատճառ Սօփիայի նաղպանձ Հասան աղայի անբանանոցէն . . .

ԶՈՒԱՐ ԺԱՆԻՔ



Տան մը մէջ

Սեպուհ, եսկրում, այսօրուան մօտիս թրային գալը իրիկունը հօրդ խապար չի տաս. հա՛, վաղն ալ քեզի տասը փորա կուտամ:

— Խեղճ եմ մայրիկ, նայէ՛ առջի ցորեկ Ծ. . . աղային գալը իմացուցի՞ հայրիկիս:

Այր և կին.

— Խաչիկ աղա, ինչ դիրք է այդ որ կիրակի օրով գլուխդ կախած կը կարդաս ու կը կարդաս.

— Բէք խըշախ բան մըն է, կնիկ, վայրենիներուն մէջ սովորութիւն կայ եղբր որ էրիկը մեռնի նէ՛ կնիկն ալ հետը կը բռնեն կերեն:

— Երեւէ՛ր ադ կնիկներուն որ էրիկնին մեռնելէն ետքը կերին եղբր, ես ինչ ընեմ որ քեզ առած առջի օրէս կրակներուն մէջ երեցայ . . .

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ՝ . .



(Շարունակութիւն)

Բոժ. — Իսպիրթօ ֆըչըսը մը. . . ճանըմ, էօյլէ թէհլիքէլի շէյլէր կէթիրմէյին:

— Գօրգմա՛, Պ. Բոժոժիկ, աղղը շիֆթլէնմիշ, սըվալանմըշալը. թէհլիքէսի եօգ:

— Օ պաշգա, էօյլէ իսէ օթուրսուն:

Ի. քի այագլը ֆըչը — Պ. Բոժոժիկ, պիլմիշ օլ քի պէն էյի պիր առամըմ:

— Պիլիրիմ, կէօզլէրինտէն պէլիտիր:

— Սահիհ սէօյլէ եօրըմ. իսպիրթօ ֆըչըսը տէյօրլար ամա, էյի առամըմ:

— Ուզաթմա, իսպիրթօ ֆըչըսընտան քիւֆիւր կիւնահտան պաշգա նէ՞ չըգար:

— Միլլէթին իշլէրի պէնսիզ իլէրի կիթմէզ:

— Իլէրի տէր իսէն՝ եանի կիրտապատօղրու, տէյիլ մի.

— Պէն տայիմա հոգաբարձու օլմալընըմ:

— Օլմալըյըմ նէ՞ տէմէք տիր. էվ-վէլտէն պէրի հոգի-բարձու սըն: Հայտէ, սէսինի քէս տէ օթուր պագայըմ. . . չէքէնօրըմ. . . թամամ եիւզ տօգսամ ն. . .

— Նէ՞ սէօյլէնօրս ին ճանըմ. պու օ. լուր շէյ տէյլի. իսպիրթօ ֆըշըսը տէ-տիլէր իսէ, սահիհէն տէյիլիմ ես:

— Տուր քի օ իսպիրթօ սայէսինտէ իչէրէնտէ տէրանպար իթմիշ օլտուղուն գատօզլար տօլուսու կիւնահլարըն հի-սապընը վէրէյիմ: Էն էվվէլ 45 քիլօ՝ Առնեմ Զտամ իլէ ագչամճըլըգ իթաի-ղին վագըթ միլլէթի խարապ իթմէք իչիւն գուրտուղուն մանօլրալարըն ա-ղըրլըլը. 35 քիլօ քիմին առապասընա պինէր իսէն՝ օնուն տավուլունու չալտը-ղընըն աղըրլըլը, 60 քիլօ՝ պիւր գաչ տէֆալար մէքթէպի գաբաթմագ իչիւն իճրա իթաիղին վիճտանսըղըլըլարըն ա-ղըրլըլը. պագի գալան 50 քիլօ տա՝ իչտէն կիւնտէն գաչընըպ, օրթալըլը եռմուրճագ հասթալըլը կիպիալթ իւսթ էտիպ էլէ կէչիրտիղին իսթիֆատէլէրին տառասը. շիմտի աննատը՞ն մը. պիր տէ չէքինմէյէրէք տուրմուշ պանա «պէն էյ» առամըմ, տէյօրսըն:

— Այըպլամա Պ. Բոթոթիկ, մէշհուր սէօլ տիր. «2էքինմէյէն» տէ Ալլահըն գու-լու տըր:

Այս միջոցին «Վառտա» պոռալու ձայն մը լուռեցաւ, և Վեվ չալուշ՝ հա-գած շալվարին լայն բաշանէրէն վազ-ցնելով քրտիւքը, խոշոր ու ծանր կո-ղով մը բերաւ խանթարին վրայ դրաւ, լսելով:

— Քիօ խոզուն զուրպան մխսի Պո-թոթիկ, արի՛, Էսա զօմու ձագեր կան-թարլամիշ ալէ. էսոնք խլխուռն ծով տի թափէի. ֆոխկաթ ասացի որ հեղ մի թօրիսինի կանթարլայասըն:

— Միշակ առո՞նք պիտի կշառենք.

— Խրամանքէ:

— Դուն ինչո՞ւ համար ինքչինքդ տա-ռան կը հանես կոր:

— Վայ օղոր՝ ի քեօ հօր խոզուն, որ կուզես՝ ծի ալ պարանպար կանթարլա-միշ արա:

— Հէլպէթ, դուն ալ պէտք է կշառիս: Հիմա սա քիւֆէիգ մէջինները սրո՞նք են:

— Ես ասեմ՝ տիւ համրէ. Վառակ և Խաչագոզ Մըրիկեան կարտաշլար. Կու-յումճիլիքտան պօղմա մէյխանէճի Լապ-լապի օղլի՝ զարուշտուրուճի. Թապլա-քետար Հաչօ՝ ֆիթիլ վէրիճի. Օտապա-շիու Պզտիկ-Տղայ՝ ճան եագըճի. իշթէ մխսի Պոթոթիկ, Թօրիսի էսոնք եին մեր Պուրղաղի աղգիւ կործերը զարմաղա-րուշ անողները:

— Յիշեսչիր եւ զքեզ:

— Յիշեալ լիջիմ մխսի Պոթոթիկ. օյլէ օլտուն:

— Ան չէ ամա, ասոնց պարագլուխ-ները ուր են:

— Պէլքի հիւսա կիւզան. Գէ մեռնիմ մխսի Պոթոթիկ, էնա պօճէք պաշի Առնէ Զիտանը խորոս հէմ զօւլի կանթարլա-միշ անես:

— Քանի մը անդամներ անիկա խան-թարի զարկած ու տառան առած ենք, բայց վրան չառներ. հէմ քեզի բան մը ըսեմ, ասամենքնիդ ալ ասանկ խանթար լամիշ ընելով ճամբու չենք կրնար յե-րել. այնչափ մեղքերով ծանրաբեռնեալ էք, որ կէօմրիւկին խանթարը անգամ չի քաշեր. ուստի պարապ տեղը չի յող-նինք, ձեզ խմբովին չէօք առապասի մը լեցնելով, Յովնան մարգարէին պէս տանելու ծովը թափելու է որ ալեկոճ-եալ Պուրկաղը խաղաղի, և կամ ժամա-նակ չանցունելով Պուրկաղը ձգել փախ-չելու է. ուրիշ միջոց չի կայ, հասկցա՞ք:


— Այո՛, Պ. Բոթոթիկ, ժամանակ չան-ցունելով մեկնելու է, — ըսին այն միջո-ցին երկու բարեկիրթ երիտասարդներ, ու ինծի մօտենալով քաղաքավարու-թեամբ խնդրեցին որ կարևոր դործի մը համար անմիջապէս իրենց հետեւիմ: Հա-մակերպեցայ, ու խանթարալս ընկերա-ցայանոնց, որոնք զիս ուղղակի կայա-րան առաջնորդելով, Բ. կարգի վակոնի մը մէջ փառաւորապէս նստեցւցին: Շողեկառը սււրեց և ճամբայ ելանք: Վակոնին մէջ վրաս քիշ մը թմրութիւն գալով, քնացեր եմ. երբոր արթնցայ՝ ինքչինքս թաթար Բաղարճըզ գոռայ: Հիմա հոն եմ:

(Շարունակելի)



Լուսանկարի մեքենայ մը իր գործիքներով և դեղերով ծախու է, արհեստը առանց փոխարինութեան սովորեցնելու պայմանաւ: Դիմել խմբագրութեան:

Վաղածաւնօր Մեքենագործ



Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրակօման փողոց թիւ 1210, Վառնա

Ժամանակէ մը ի վեր երկրագործական մեքենաներով զբաղած ըլլալուս պատճառաւ իմ մասնաւոր գործարանս գոց կը մնար. հիմա զայն վերաբացած ըլլալով, կը ծանուցանեմ թէ, ամենտեսակ կարի մեքենաներու համար մասնագէտ վարպետ մը բերել տուած եմ:

Գործարանիս մէջ կը նորոգուին նաեւ շոգեշարժ և ջրաշարժ մեքենաներ, հեծանիւներ (պիսիքէթ) դուլպայի և երկրագործական մեքենաներ, ջրհաններ և այլն, զորս նորոգելէ վերջը եթէ մէկ տարուան միջոցին աւրուին, պատրաստ ենք վերանորոգելու: Նոր շաղաքներ և շոգեազօրիներ նոր ի նորոյ կը հաստատենք կանոնաւոր կերպով:

Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղի և Ապաշար

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր,

Գրեց Տիրան Գ. Փափագեան

Դին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

Մենք ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷՆ

Երաշխատուեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Ամբողջ	Կէս	Փառորդ	Մէկ ութերդ
10 Ֆ.	5 Ֆ.	2, 50 Ֆ.	1, 25 Ֆ.
" 16	8	4	2
" 20	10	5	2, 50
" 28	14	7	3, 50
" 24	12	6	3
" 17, 20	8, 60	4, 30	2, 15
115, 20	57, 60	28, 80	14, 40

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գրել Սեդակաւոր Տիար ՍՈՐԳԻՍ ԳԱՐԻԲԵԱՆ, միակ գլխաւոր գործակալ տոյն վիճակաւորութեան, Վառնա, Մոսկովա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնէն ալ վճարել:

Отговорникъ М. Скововъ

Печантица Взаимность — "Варна."